



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16

Գ Ե Ր Ձ 347

Վ. Ի. ԼԵՆԻՆ (Վ. ՈՒԼՅԱՆՈՎ)

Ո Ր Գ Ե Ր Ձ 311

ՆԱՄԱԿՆԵՐ ՅԵՌՎԻՑ

5082

310




ՄԳԻՅՅԵ

ԱԳԶ

ՆՅ 311

2

12



ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

1917 թ. փետրվարյան հեղափոխութեանը ընկ. Լենինը գտնվում էր Ցյուրիխում (Չվեյցարիա): Վատարվող մեծ դեպքերի մասին կցկտուր և հակասական տեղեկութիւններ ստանալով բուրժուական մամուլից, ընկ. Լենինը գրիչ և վերցնում և գրում իր «Նամակներ հեռվից» սերիան, վորտեղ նա լուսարանում և փետրվարյան հեղափոխութեան հիմնական խնդիրները:

Այդ նամակներում ընկ. Լենինի խորատես միտքը թափանցում և հեղափոխութեան իսկական ահուհները և պարզում նրա զարգացման հետագա ետապները:

Ընթերցողի ուշադրութեանը հանձնվող այս նամակը առաջինն և «Նամակներ հեռվից» սերիայի մեջ և գրված և 1917 թ. մարտի 20-ին (հին տոմ.):

Ա. Մ.





12 - 4h 9-2

ՆԱՄԱԿՆԵՐ ՀԵՌՎԻՑ

1917 թ. մարտ.

ԱՌԱՋԻՆ ՇԵՂԱՓՈՒՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՏԱՊԸ

Առաջին հեղափոխությունը, վորպէս ծնունդ համաշխարհային իմպերիալիստական պատերազմի, պայթեց: Այդ առաջին հեղափոխությունը, հավանականաբար, վերջինը չի լինի:

Այդ առաջին հեղափոխության, այսինքն՝ 1917 թ. մարտի 1-ի ռուսական հեղափոխության առաջին ետապը, վորքան կարելի յե յեզրակացնել Շվեյցարիայում այս տողերը գրողիս տրամագրության տակ յեղած աղքատիկ տվյալներից, ավարտվեց: Այդ առաջին ետապը, հավանականաբար, մեր հեղափոխության վերջին ետապը չի լինի:

Ինչպէս կարող եր կատարվել այդ «հրաշքը», ինչպէս կարող եր ընդամենը 8 որում—պ. Միլյոսկովի՝ Ռուսաստանի բոլոր արտասահմանյան ներկայացուցիչներին ուղղած պարծենկոտ հեռագրում հիշված այժամանակամիջում—առանց այլևայլության տապալվել այն միապետությունը, վորը կանգուն եր դարերի ընթացքում, և վորն իր գոյությունը պահպանեց 1905—

1907 թ. թ. համաժողովրդական դասակարգային վիթխարի կռիվների յերեք տարիների ընթացքում:

Բնության և պատմության մեջ հրաշքներ չեն կատարվում, սակայն պատմության մեջ կատարվող յուրաքանչյուր սուր փոփոխություն, նմանապես և յուրաքանչյուր հեղափոխություն, այնպիսի հարուստ բովանդակություն և տալիս, կովող կողմերի ուժերի հարաբերության ու կովի ձևերի այնպիսի անսպասելի — յուրահատուկ զուգորդում և հրապարակ հանում, վոր սովորական քաղքենու մտքին շատ բան պետք և հրաշք թվա:

Վորպեսզի ցարական միապետությունը մի քանի որվա մեջ տապալվեր, անհրաժեշտ էր համաշխարհային-պատմական կարևորություն ունեցող մի ամբողջ շարք պայմանների զուգորդում: Մատնանշենք նրանցից գլխավորները:

Առանց 1905—1905 թ. թ. ընթացքում տեղի ունեցած դասակարգային հսկա կռիվների և ոուս պրոլետարիատի հանդես բերած հեղափոխական եներդիայի 3 տարիների, անհնարին իր այդքան արագ կատարված յերկրորդ հեղափոխությունը, արագ—այն մտքով, վոր նրա ճախնական հտապն ավարտվեց մի քանի որում: Առաջինը (1905 թ.) խորը ակոսեց հողը, արմատախիլ արեց դարավոր նախապաշարումները, քաղաքական կյանքի և քաղաքական պայքարի բարձրացրեց միլիոնավոր բանվորների ու տասնյակ միլիոնավոր գյուղացիների, փոխադարձաբար միմյանց—և ամբողջ աշխարհին—ցույց տվեց ոուս հասարակության բոլոր դասակարգերին (և բոլոր գլխավոր կուսակցություններին), նրանց իսկական ընույթը, նրանց շա-

հերի, նրանց ուժերի, նրանց գործունեությունից յեղանակների, նրանց մերձավոր ու հեռավոր նպատակների իսկական հարաբերությունը: Առաջին հեղափոխությունը և նրան հաջորդող հակահեղափոխական շրջանը (1907—1914) յերևան հանեց ցարական միապետության ամբողջ ելությունը, հասցրեց նրան «վերջին սահմանին», մերկացրեց նրա ամբողջ փտածությունը, նողկալիությունը, ցարական վահանակի ամբողջ ցինիզմն ու ապականությունը, հրեշավոր Ռասպուտինի գլխավորությունը, Ռամանովների ընտանիքի բոլոր գազանությունները, Ռամանովների, — Ռուսաստանը հրեաների, բանավորների ու հեղափոխականների արյունով վողողած այդ ջարդարարների, այդ «հավասարների մեջ առաջին կալվածատերերի, վորոնք թրոււմ եին սիւրբազան դեսյատին հողի և վորոնք ամեն տեսակ գազանություն, ամեն տեսակ վոճրագործություն եյին կատարում, անհամար թվով քաղաքացիների եյին քայքայում ու խեղդում ի սեր իրենց և իրենց դասակարգի այդ «սրբազան սեփականություն» պահպանման:

Առանց 1905-1907 թ. թ. հեղափոխության, առանց 1903-1914 թ. թ. հակահեղափոխության անհնարին կը լիներ ուստի ժողովրդի և Ռուսաստանում ապրող ազգերի բոլոր դասակարգերի այդպիսի ճիշտ «ինքնորոշումը», չեր կարող վորոշվել այդ դասակարգերի փոխադարձ հարաբերությունը և նրանց վերաբերմունքը դեպի ցարական միապետությունը. այդ հարաբերությունը յերևան յեկավ 1917 թ. փետրվարյան ամիսների հեղափոխության 8 օրում: Այդ ութօրյա հեղափոխությունը, յեթե թույլատրելի յե այսպես այլաբանորեն արտահայտվել, «խաղացվեց» կար-

ծես տասնյակ գլխավոր ու յերկրորդական փորձերից հետո. «դերասանները» ըստ ամենայնի, բոլոր մանրամասնությամբ ճանաչում էյին միմյանց, գիտեյին իրենց դերը, իրենց տեղը, խաղի պարագաները, նույնիսկ քաղաքական ուղղությունների ու գործելակերպի քիչ-շատ նկատելի ամեն մի տարբերություն, ամեն մի նրբություն:

Սակայն յեթե առաջին, 1905 թ. մեծ հեղափոխությունը, վորը պարոնայք Գուչկովների և Միլյուկովների ու նրանց արքանյակների կողմից դատապարտվեց վորպես «մեծ խռովություն», 12 տարի հետո բերեց, հասցրեց 1917 թ. «փայլուն», փառավոր» հեղափոխության, վորը Գուչկովներն ու Միլյուկովներն անվանում են «փառավոր», վորովհետև այդ հեղափոխությունը նրանց (առայժմ) իշխանություն տվեց, — ապա անհրաժեշտ եր ևս մի մեծ, հզոր, ամենազոր «ռեժիսյոր», վորը, մի կողմից, հնարավորություն ունենար հսկայական չափերով արագացնելու համաշխարհային պատմության ընթացքը, իսկ, մյուս կողմից, ստեղծելու չտեսնված չափեր ընդունող համաշխարհային տնտեսական, քաղաքական, տղգային և միջազգային ճգնաժամեր: Բացի համաշխարհային պատմության արտակարգ արագացումից, անհրաժեշտ էյին այդ պատմության առանձնապես սուր վոլորաններ (повороты), վորպեսզի այդ վոլորաններից մեկում Ռամանովների միապետության արյունով ու կեղտով շաղախված սայլը միանգամից շրջվեր:

Այդ ամենակարող «ռեժիսյորը», պատմության ընթացքն արագացնող այդ հզոր ուժը հանդիսացավ համաշխարհային իմպերիալիստական պատերազմը:

Այժմ արդեն անվիճելի յե, վոր այդ պատերազմը
— համաշխարհային ե, քանի վոր Մ. Նահանգներն ու
Չինաստանը, վորոնք այսոր կիսով չափ արդեն մաս-
նակից են նրան, վաղն ամբողջովին կը մասնակցեն
նրան:

Այժմ արդեն անվիճելի յե, վոր այդ պատերազմը
իմպերիալիստական ե յերկու կողմից: Միայն կապի-
տալիստներն ու նրանց արբանյակները, սոցիալ-պատ-
րիոտներն ու սոցիալ-շովինիստները, — կարող են հեր-
քել կամ քողարկել այդ փաստը: Պատերազմը մղում
ե և գերմանական, և անգլո-ֆրանսիական բուրժուա-
զիան ոտար յերկիրներ կողոպտելու համար, վորքը ազ-
գություններին խեղդելու, ամբողջ աշխարհի վրա ֆի-
նանսապես իշխելու, գաղութները բաժան-բաժան ա-
նելու և միմյանց մեջ բաշխելու համար, զանազան
յերկիրների բանվորներին հիմարացնելու միջոցով կոր-
ծանվող կապիտալիստական հասարակակարգը փրկելու
համար:

Իմպերիալիստական պատերազմը պետք ե որ յեկ-
տիվ անխուսափելիությամբ չափազանց արագացներ
և չտեսնված չափերով սրեր պրոլետարիատի դասա-
կարգային պայքարն ընդդեմ բուրժուազիայի, պետք
ե վերածվեր քաղաքացիական կռվի թշնամի դասա-
կարգերի միջև:

Իմպերիալիստական պատերազմը քաղաքացիա-
կանի վերածվելու պրոցեսն սկսվել ե 1917 թ. փե-
տրրվար-մարտ ամիսների հեղափոխությամբ, վորի
առաջին ետապը մեզ սույց տվեց, վոր նախ, ցարիզ-
մին միատեղ հարվածեցին յերկու ույժ, մի կողմից,
ամբողջ բուրժուական և կալվածատիրական Ռուսաս-

տանն իր բոլոր անգիտակից արբանյակների ու բոլոր
գիտակից ղեկավարների հետ միասին, հունձինս անպլո-
ֆրանսիական դեսպանների ու կապիտալիստների, և,
մյուս կողմից՝ Բանվորների ու Զինվորների Պասգա-
մավորների Խորհուրդը:

Այդ յերեք քաղաքական բանակները, այդ յերեք
հիմնական քաղաքական ուժերն էլ են.— 1) սարական
միապետութունը— ճորտատեր-կալվածատերերի, հին
չինոմսիկության ու դեներալիտետի գլուխը, 2) բուր-
ժուական և կալվածատիրական ակոյաբրիտական կա-
դետական Ռուսաստանը, վորի յետևից քարշ եր գալիս
մանր բուրժուազիան, 3) Բանվորների ու Զինվորների
Պասգամավորների Խորհուրդը, վորն իրեն զաշնակից-
ներ և փնտրում ամբողջ պրոլետարիատի ու ամենա-
աղքատ բնակչության մասսաների մեջ. այս յերեք
հիմնական քաղաքական ուժերը լիակատար պարզու-
թյամբ յերևան յեկան նույն իսկ «առաջին ետապի» ճ
որվա ընթացքում, նույնիսկ դեպքերից հետու. զանվող,
արտասահմանյան թերթերի աղքատիկ հեռագրերով
բավարարվող այնպիսի մի գիտողի համար, ինչպես
տողերիս գրողն է:

Սակայն նախքան այս առթիվ մանրամասն խոսելը,
յես պետք է անդրադառնամ իմ նամակի այն մասին,
վորը նվիրված է առաջնակարգ ուժ հանդիսացող դորժո-
նին, համաշխարհային իմպերիալիստական պատերազ-
մին:

Պատերազմը յերկաթի շղթաներով միմյանց կա-
պեց կովող պետութուններին, կապիտալիստների կըու-
վող խմբերին, կապիտալիստական ստրկության ստըր-
կատերերին: Արյան մի գունդ— ահա թե ինչ է մեր

ապրած սլատմական մոմենտի հասարակական-քաղաքական կյանքը:

Պատերազմի սկզբում բուրժուազիայի կողմն անցած սոցիալիստները, այդ բոլոր Դավիթները և Շեյդեմանները Գերմանիայում, Պլեխանովները, Պոտրեսովները Գլոզգեյներն ու Ընկ. Ռուսաստանում, յերկար ժամանակ իրենց ամբողջ կոկորդով բղավում, աղմկում էյին հեղափոխականների «սին հույսերի», Բազելի մանիֆեստի «սին հույսերի» և իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու «ցնորք-Փարսի» դեմ: Նրանք ամեն կերպ յերգում, դովաբանում էյին այն ույժը, կենսունակութունն ու հարատեվելու ընդունակութունը, վորը իբրթե յերեվան եր հանել կապիտալիզմը, — Արաճ, ովքեր ոգնեցին կապիտալիստներին «հարմարեցնել», ընտելացնել, հիմարացնել և ջլատել զանազան յերկիրների բանվոր դասակարգերին:

Բայց «լավ ե ծիծաղում նա, ով վերջն ե ծիծաղում»: Բուրժուազիային հաջողվեց կարճ ժամանակով հետաձգել պատերազմի արդյունք հեղափոխական ճրգնաժամը:

Այդ ճգնաժամն անդուսպ թափով աճում, զարգանում ե բոլոր յերկիրներում, սկսած Գերմանիայից, վորտեղ վերջերս այդ յերկիրն այցելած մի դիտողի արտահայտության համաձայն, տիրում ե «հանճարեղ կերպով կազմակերպված սով», և վերջացրած Անգլիայով ու Ֆրանսիայով, վորտեղ սովը Առյուծապես մոտենում ե և վորտեղ նա ավելի պակաս «հանճարեղ» կերպով ե կազմակերպված:

Բնական ե, վոր ցարական Ռուսաստանում, վորտեղ քայքայումն ամենահրեշավոր չափերի յեր հասել,

և վորտեղ պրոլետարիատն ամենահեղափոխականն էր (վոչ թե շնորհիվ նրա առանձին հատկությունների, այլ՝ շնորհիվ «հինգ» թվականի կենդանի տրադիցիաների), — հեղափոխական ճգնաժամը սկսվեց ամենից շուտ: Այդ ճգնաժամն արագացավ մի շարք ամենածանր պարտությունների շնորհիվ, վոր կրեցին Ռուսաստանն ու նրա դաշնակիցները: Այդ պարտությունները ցնցեցին վողջ պետական հին մեխանիզմը և ամբողջ հին կարգը, այդ կարգի դեմ զայրույթով լըցրեցին բնակչության բոլոր դասակարգերին, գաղազեցրին բանակը, մեծ չափերով վոչնչացրին նրա հին, նեղ-ազնվական և առանձնապես փտած չինովնիկական ծագում ունեցող հրամանատարական կազմը, վորը փոխարինեցին յերիտասարդ, թարմ, առավելապես բուրժուական, այլատարր (разночинский) մանրբուրժուական կազմով:

Սակայն յեթե պատերազմում կրած պարտությունները բացասական գործոնի դեր խաղացին և արագացրին պայթյունը, ապա անգլո-Ֆրանսիական Ֆինանսական կապիտալի, անգլո-Ֆրանսիական իմպերիալիզմի և Ռուսաստանի ակտյաբրիստ-կադետական կապիտալի միջև ստեղծված կապը այդ ճգնաժամն արագացնող գործոն հանդիսացավ:

Գործի այս ամենակարևոր կողմը, հասկանալի պատճառներով, լռության և տալիս անգլո-Ֆրանսիական մամուլը, և չարախնդորեն ընդգծում է գերմանական մամուլը: Մենք, մարքսիստներս, պետք է զգաստորեն նայենք ճշմարտության ճակատին, իր ամբողջ մերկությամբ, չշփոթվելով վոչ կովոդ իմպերիալիստների առաջին խմբի զիվանազեաների ու մի-

նիստրների պաշտոնական քաղցր-դիվանագիտական սաերից, վոչ կովողների մյուս խմբում նստած՝ նըրանց Ֆինանսական ու սաղմական մրցակիցների աչքով անելուց ու հրհուոցից: Փետրվար-մարտ ամիսների հեղափոխության ամբողջ ընթացքը պարզ ցույց ետալիս, վոր անգլիական ու Ֆրանսիական դեսպանություններն իրենց գործակալներով ու «կապերով», վորոնք վաղուց ամենահուսահատական ջանքեր եյին գործ գնում խանգարելու Նիկոլայ Յերկրորդի ու Վիլհելմ 2-ի միջև կայանալիք «սեպարատ» հաշտությանը (սակայն—հուսանք և աշխատենք, վոր այդ տեղի ունենա), անմիջականորեն աշխատում եյին Նիկոլայ Ռամանովին փոխարինել մի ուրիշով:

Չտարվենք սին հուշսերով,

Յեթե հեղափոխությունը հաղթեց այդպես շուտ և —արտաքուստ, առաջին մակերեսային հայացքից— այդպես «հիմնավոր կերպով», ապա միայն այն պատճառով, վոր չափազանց արտասովոր պատմական սխտուացիայի շնորհիվ ձուլվեցին միմյանց հետ, և չափազանց «համերաշխ կերպով» ձուլվեցին բոլորովին սարբեր հոսանքներ, բոլորովին սարբեր դասակարգային շահեր, բոլորովին հակադիր քաղաքական ու սոցիալական ձգտումներ. այն է՝ անգլո-ֆրանսիական խմբերիալիստների դավադրությունը, վոր դրդում եր Միլյոնկովին և Գուչկովին ու Ընկ. իշխանությունն իրենց ձեռքը վերցնել, վորպեսզի շարունակվի իմպերիալիստական պատերազմը, վորպեսզի այդ պատերազմն ավելի կատաղությամբ ու համառությամբ մղվի, վորպեսզի նորից վոչնչանան միլիոնավոր ուսու բանվորներ ու գյուղացիներ, և այս ամենը

նրա համար, վորպեսզի Կոստանդնուպոլիսն ստանան...
Գուշկոմները, Սիրիան... Փրանսիական, Միջագետքը...
անգլիական կապիտալիստները, և այլն: Այս մի կողմից,
իսկ մյուս կողմից—պրոլետարական և մասսայա-
կան-ժողովրդական (քաղաքների ու գյուղերի ամբողջ
ամենաաղքատ բնակչութունը) հեղափոխական
բնույթի շարժումը հանուն կացի, հանուն խաղա-
ղուքյան յե՛վ հանուն իսկական ազատության:

Հեղափոխական բանվորներն ու զինվորները
հիմքից կործանեցին ցարական նողկալի միապետու-
թյունը, չհրճվելով և չշփոթվելով այն բանից, վոր վորոշ,
կարճատև և ըստ կոնյուկտուրայի բացառիկ
պատմական մոմենտներում նրանց ոգևորյան է հաս-
նում Բյուզենենի, Գուշկովի և Միլյուկովի ու Ընկ.
պայքարը, վորոնց նպատակն էր մի միապետին փո-
խարինել մի ուրիշով:

Այսպես և միայն այսպես էլին գործի հանգա-
մանքները, այսպես և միայն այսպես կարող է իրա-
կանութունը տեսնել այն քաղաքագետը, վոր չի վա-
խենում ճշմարտութունից, զգաստորեն կշռում և հե-
ղափոխության հասարակական ուժերի հարաբերու-
թյունը, յուրաքանչյուր «ընթացիկ մոմենտ» գնահա-
տում և վոչ միայն նրա ավյալ, որվա առանձնահատ-
կության տեսակետից, այլ և ավելի խոր զստանակնե-
րի, ինչպես Ռուսաստանի, այնպես և ամբողջ աշխար-
հի պրոլետարիատի ու բուրժուազիայի շահերի ավելի
խոր հարաբերության տեսակետից:

Պիտերի բանվորներն ու զինվորները, ինչպես և
ամբողջ Ռուսաստանի բանվորներն ու զինվորները,
անձնագոհությամբ կզվում էլին ցարական միապե-

տության դեմ, ազատության, հողը գյուղացիներին
տալու, խմբերիալիստական սպանդանոցի փոխարեն
խաղաղություն հաստատելու համար: Անգլո-Ֆրանսի-
ական կապիտալը, այդ սպանդանոցը շարունակելու և
ուժեղացնելու նպատակով, պալատական ինտրիգներ
եր լարում, դավադրություններ եր սարքում, դրդում ու
հուսադրում եր Գուշկովներին ու Միլյուկովներին, ծա-
ծուկ կազմակերպում եր բոլորովին պատրաստ նոր կա-
ռավարություն, վորը և իշխանությունն իր ձեռքը գցեց,
հենց վոր պրոլետարական պայքարն առաջին հար-
վածները հասցրեց ցարիզմին:

Այդ կառավարությունը պատահական մարդկանց
մի խմբակ չէ:

Այդ—Ռուսաստանի քաղաքական կյանքի բարձ-
րացած նոր դասակարգի ներկայացուցիչներն են, կա-
պիտալիստ կալվածատերերի ու բուրժուազիայի դա-
սակարգի, վոր վաղուց կառավարում և մեր յերկիրը
տնտեսապես և վորը, ինչպես 1905-1907 թ. թ. հակա-
հեղափոխության, ու, վերջապես, — և այն ել մի ա-
ռանձին արագությամբ, — 1914-1917 թ. թ. պատե-
րագմի ժամանակ կազմակերպվում եր քաղաքականա-
պես, իր ձեռքը վերցնելով և տեղական ինքնավարու-
թյունը, և ժողովրդական կրթության գործը, և դասա-
դան համագումարներ, և Իսլաման, և սահմարդյունա-
բերական կոմիտեները և այլն: Այդ նոր դասակարգը
համարյա բոլորովին «իշխանության գլուխ եր անցել
1917 թ. նախորյակին, ուստի բավական եյին ցարիզ-
մին հասցրած առաջին հարվածները, վորպեսզի նա
փլչեր, տեղ մաքրելով բուրժուազիայի համար: Իմպե-
րիալիստական պատերազմը, ուժերի չափազանց մեծ

լարում պահանջելով, այնպես արագացրեց հետամնաց Ռուսաստանի զարգացման ընթացքը, վոր մենք «միանգամից» (իրականում — իբր թե միանգամից) հասանք Իտալիային, Անգլիային, համարյա Ֆրանսիային, ստացանք «կոալիցիոն», «ազգային» (այսինքն՝ իմպերիալիստական սպանդանոցի գործը վարելու և ժողովրդին խաբելու ընդունակ) «պարլամենտական» կառավարություն:

Այդ կառավարության, — իրականում միլիարդատեր «Ֆիրմաների», այսինքն այս պատերազմի տեսակետից Անգլիայի ու Ֆրանսիայի հասարակ գործակատարի, — կողքին կազմվեց նոր, անսպաշտոն, դեռ չզարգացած, համեմատաբար թույլ բանվորական կառավարություն, վորն արտահայտում էր պրոլետարիատի և քաղաքային ու գյուղական բնակչության ամբողջ ամենաաղքատ մասի շահերը: Այդ — Պիտերի Բանվորների ու Զինվորների Պասզամավորների Խորհուրդը է:

Այս է իրական քաղաքական կացությունը, վորը մենք ամենից առաջ պետք է աշխատենք բնորոշել ամենահնարավոր սթրեկտիվ ճշտությամբ, վորպեսզի մարքսիստական տակտիկան հիմնենք այն միակ ամուր պատվանդանի վրա, վորի վրա նա պետք է հիմնվի, — փաստերի պատվանդանի վրա:

Ցարական միապետությունը ՉախՉախված և, բայց դեռ վոչնչացված չէ:

Ակտյարրիստական, կադետական, բուրժուական կառավարությունը, վոր ուղում է իմպերիալիստական պատերազմը վարել «մինչև վերջը», իրականում «Անգլիա և Ֆրանսիա» Ֆինանսական Ֆիրմայի գործակա-

տարն է, վոր հարկադրված է ժողովրդին խոստանալ
մահախնամ ազատություններ ու վտորմություն, վո-
րոնց փոխարեն այդ կառավարությունը շարունակի իշ-
խել ժողովրդի վրա և հնարավորություն ունենա շարու-
նակելու իմպերիալիստական սպանդանոցը:


Բանվորների ու Զինվորների Պատգամավորների
Պորհուրդը, վորպես բանվորական կառավարության
սաղմ, ժողովրդի ամբողջ ամենաաղքատ մասի, այսին-
քըն՝ $\frac{9}{10}$ մասի շահերի ներկայացուցիչն է, վոր ձրգ-
տում է ձեռք բերել խաղաղություն, հաց, ազատու-
թուն:

Այդ յերեք ուժերի պայքարը բնորոշում է ներ-
կայումս ստեղծված այն կացությունը, վոր հեղափո-
խության առաջին ետապից դեպի յերկրորդ ետապը
տանող անցման շրջանն է հանդիսանում:

Ցարական միապետության դեմ իրական պայ-
քար մղելու, ազատությունը վոչ միայն խոսքով, վոչ
թե լիբերալ ճոռոմաբանների խոստումներով, այլ ի-
րապես ապահովելու համար, վոչ թե բանվորները պետք
է պաշտպանեն նոր կառավարությանը, այլ այդ կա-
ռավարությունը պետք է «պաշտպանի» բանվորներին,
վորովհետև ազատության ու ցարիզմի վերջնական
խորտակման միակ յերաժխիք պրոլետարիատին սպա-
ռազինելն է, Բանվորների ու Զինվորների Պատգամա-
վորների Պորհուրդի դերի, նշանակության և ույժի ամ-
բապնդումը, ընդարձակումն ու զարգացումն է:

Մնացած բոլորը—Ֆրազներ ու ստախոսություն է,
լիբերալ ու իմպերիալ բանակի պալիտիկանների ինք-
նախարեյություն:

Ոգնեցիք բանվորների սպանդանոցի գործին,



կամ գեթ մի խանգարեք այդ գործին, — և ազատությունը Ռուսաստանում անհաղթելի կը լինի, միապետությունն անվերահանգնելի, հանրապետությունն ապահովված:

Այլապես՝ ժողովուրդը խարված կը լինի: Սոստումներն աժան են, նրանք վոչինչ չարժեն. խոստումներով են կերակրել ժողովրդին և հիմարացրել բանվորներին բոլոր բուրժուական պալիտիկանները բոլոր բուրժուական հեղափոխությունների ժամանակ:

Մեր հեղափոխությունը բուրժուական է, — ուստի բանվորները պետք է պաշտպանեն բուրժուազիային, ասում են լիկվիդատորների բանակի անպետք քաղաքագետները:

Մեր հեղափոխությունը բուրժուական է, — ասում ենք մենք, մարքսիստներս, ուստի բանվորները պետք է բաց անեն ժողովրդի աչքերը, ցույց տան նրան բուրժուական պալիտիկանների խարերայությունը, սովորեցնեն նրան չհավատալ խոսքերի, ապավինել միայն իր ուժերին, իր կազմակերպությանը, իր միությանը, իր սպառազինմանը:

Ակադյաբրիստների ու կադետների, Գուչկովների ու Միլյուկովների կառավարությունը չի կարող, — յեթե նույնիսկ անկեղծորեն ցանկանա, — վոչ խաղաղություն, վոչ հաց և վոչ ել ազատություն տալ:

Խաղաղություն չի կարող տալ, վորովհետև նա պատերազմի կառավարություն է, իմպերիալիստական սպանդանոցը շարունակելու կառավարություն է, զավթումների կառավարություն է, քանի դեռ նա վոչ մի ձայն չի հանել այն մասին, թե հրաժարվում է Հայաստանը, Գալիցիան, Թուրքիան զավթելու, Կոստանդնուպոլիսը խլելու, Լեհաստանը, Կուռլանդիան Լիտվան

և այլ յերկիրներ կրկին նվաճելու ցարական քաղաքա-
կանությունից: Այդ կառավարության ձեռքն ու վտաքը
կապված, կաշկանդված և անզլո-Ֆրանսիական իմպերիա-
լիստական կապիտալով: Ռուսական կապիտալը միայն
մի բաժանմունքն է այն համաշխարհային «Ֆիրմայի»,
վոր խաղում և հարյուրավոր միլիարդ ուլբլիների հետ
և վորը կրում է «Մնզլիա և Ֆրանսիա» անունը:

Հայ չի կարող տալ, վորովհետև այդ կառավարու-
թյունը բուրժուական է, լավագույն դեպքում նա
ժողովրդին կը տա այն, ինչ տվեց Ֆերմանիան, — հան-
ճարեղ կերպով կազմակերպված սով»: Սակայն ժողո-
վուրդը չի հանդուրժի սովը, նա կիմանա և, հավանա-
կանաբար, շուտով կիմանա, վոր հայ կա և կը ստացվի,
սակայն վոչ այլ կերպ, բայց յեթե այնպիսի միջոց-
ների կիրառմամբ, վորոնք չեն խոնարհվի կապիտալի
յեվ հողատիրության արբության առաջ:

Ազատություն չի կարող տալ, վորովհետև այդ
կալվածատիրական-կապիտալիստական կառավարու-
թյունն է, ժողովրդից վախեցող կառավարությունն է:

Այդ կառավարության հանդեպ բռնելիք մեր մոտա-
գա ընթացքի վերաբերյալ տակտիկական խնդիրների
մասին մենք կը խոսենք ուրիշ հոդվածում: Այնտեղ
մենք ցույց կը տանք, թե վճրն է հեղափոխության
առաջին ետապից դեպի մյուսը տանող անցման շրջանի
ընթացիկ մոմենտի յուրահատուկ բնույթը, թե ինչն
այդ մոմենտում մեր լողունը, «որվա անելիքը պետք
է լինի. բանվորներ, գուժ ցարիզմի դեմ մղվող բազա-
բացիական կռվում պրոլետարական, ժողովրդական
հերոսության հրաճներ գործեցիք, գուժ պեժ և պրոլե-
տարական յեվ համաժողովրդական կազմակերպու-

քյան հրաժեհեր գործեմ, վորպեսզի նախապատասխանեմ
ձեր այն հաղթանակը, վոր ցանկելու յեմ հեղափոխու-
քյան յերկրորդ ետապուամ: Մահմանափակվելով այժմ
հեղափոխության այս ետապի դասակարգային պայքա-
րի ու դասակարգային ուժերի հարաբերության վեր-
լուծությամբ, մենք պետք է այս հարցի պատասխանն ել
տանք. ի՞նչպիսի դաժնակիցներ ունի պրոլետարիատն
այս հեղափոխության ժամանակ:

Նա յերկու դաշնակից ունի. առաջինը՝ Ռուսաս-
տանի կիսապրոլետարական և, մասամբ, մանր գյու-
ղացիական ազգաբնակչության ընդարձակ, շատ տաս-
նյակ միլիոնների հասնող մասսան է, վոր ընդհանուր
ազգաբնակչության հսկայական մեծամասնությունն է
կազմում: Այդ մասսային անհրաժեշտ են խաղաղու-
թյուն, հաց, ազատություն, հող: Այդ մասսան ան-
խուսափելիորեն ընկնելու յե բուրժուազիայի և հատկա-
պես մանր-բուրժուազիայի վորոշ ազդեցության տակ,
այս վերջինն նա ամենից ավելի յե մոտենում, ավելի
յե համապատասխանում իր կյանքի պայմաններով,
տատանվելով բուրժուազիայի ու պրոլետարիատի մի-
ջեմ: Պատերազմի դաժան դասերը, վորոնք այնքան
ավելի դաժան կը լինեն, վորքան Գուչկովները, Էվով-
ները, Միլյուկովներն ու Ընկ. ավելի յեռանդով կը
շարունակեն պատերազմը, անխուսափելիորեն այդ
մասսային կը մղեն դեպի պրոլետարիատը, կը ստիպեն
նրան գնալ այդ պրոլետարիատի յետևից: Այժմ մենք
պետք է աշխատենք ամենից առաջ և ամենից շատ այդ
մասսային լուսավորել ու կազմակերպել, ոգտվելով նոր
կարգերի ազատությունից և Բանվորների ու Զինվոր-
ների Պատգամավորների Սորհուրդներից: Գյուղացիա-

կան պատգամավորների խորհուրդներ, գյուղատնտեսական բանվորների խորհուրդներ, — ահա մեր ամենահրատապ խնդիրներից մեկը: Միաժամանակ մենք վոչ թե պետք է միայն աշխատենք, վոր գյուղատնտեսական բանվորներն ընտրեն իրենց առանձին խորհուրդները, այլև՝ վորպեսզի ընչազուրկ ու ամենաազքատ գյուղացիները կազմակերպվեն ունևոր գյուղացիներից առանձին: Այդ այժմ ամենահրատապ, ամենաանհրաժեշտ կազմակերպության հատուկ խնդիրների ու հատուկ ձևերի մասին — հաջորդ նամակում:

Յերկրորդ՝ ոուս պրոլետարիատի դաշնակիցն է բոլոր կովոդ և ընդհանրապես բոլոր յերկիրների պրոլետարիատը. նա այժմ բավական ճնշված, ընկճված և պատերազմի պատճառով, և նրա անունից շատ հաճախ են խոսում բուրժուազիայի կողմն անցած սոցիալ-շովինիստները և՛ Յեվրոպայում և Ռուսաստանում, ինչպես՝ Պլեխանովը, Գվոզդիևը և Պոտրեսովը: Սակայն պրոլետարիատն ազատվում է նրանց ազդեցությունից. պատերազմի յուրաքանչյուր ամիսն ավելի յե արագացնում այդ ազատագրման ընթացքը, իսկ ոուսական հեղափոխությունն անխուսափելիորեն հսկայական չափերով կարագացնի այդ պրոցեսսը:

Այդ յերկու դաշնակցի հետ Ռուսաստանի պրոլետարիատը, ոգտագործելով այժմյան անցողական մոմենտի առանձնահատկությունները, կարող է ասպարեզ դուրս գալ և դուրս կը գա նախ՝ դեմոկրատական հանրապետություն ձևք բերելու և գյուղացիությանը լիակատար հաղթանակ տալու ընդդեմ կարվածատերերի, իսկ հետո դիմելու դեպի սոցիալիզմ, վորը

միայն պատերազմից տանջված ժողովուրդներին կը
տա խաղաղություն, հաց յեվ ազատություն:

«Պրավդա», № 14 և 15,
21, 22 մարտի 1917 թ.
ստորագրված և «Ն. Լենին»:

Կ. ՊՐԱՎԴԱՅԻ ՑԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ ԸՆԹՈՒՅՑՈՒՄ
ՍԵՆՏ ՍՈՒՍՔՐՈՒՄ
БИБЛИОТЕКА-СТАЛЬНИ

- 70 -

ՀՀ Ազգային գրադարան



NL0836110

16

ԱԳՀ

12

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՅՈՒՆԱՐԻ
 ԿԵՆՏՐԱԼԻ ՎԵՐԿՆԵՐԻ
 ԿԵՆՏՐԱԼԻ ԲԻԲԼԻՈՏԵԿԱ-ՎԵՐԿՆԵՐԻ
 ԿԵՆՏՐԱԼԻ ԴՈՄ ԿԵՆՏՐԱԼԻ
 ԿԵՆՏՐԱԼԻ ԲԻԲԼԻՈՏԵԿԱ-ՎԵՐԿՆԵՐԻ

ԳԻՆՆ Ե 7 ԿՈՊ.